ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2022/1

ք. Երևան

«31» 08 2022թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի **Արթուր Սողոմոնյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Սոլար Ցենտր» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ալիկ Ֆահրադյանի**, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետարանի վարչական շենքի սան հանգույցների վերանորոգում աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **9,737,100** (ինը միլիոն յոթ հարյուր երեսունյոթ միլիոն հարյուր) ՀՀ դրամ, որից **1,622,850 (մեկ միլիոն վեց հարյուր քսաներկու հազար ութ հարյուր հիսուն)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **1,947,420 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր քսան)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:[30]

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

30.1 Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

31 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ՍՈԼԱՐ ՑԵՆՏՐ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին Ե.Չարենցի 1/1
ՀՎՀՀ՝00846441	Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ՝ 1510032335590400	ՀՀ՝ 220213331410000
Արարատբանկ ԲԲԸ	ՀՎՀՀ՝ 04431014
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Գլխավոր տնօրեն՝ Ալիկ Ֆահրադյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները

«Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժինների համարները	*Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	**Բնակելի, հասարակական և արտադրական;**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«31» օգոստոսի 2022թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N/N Հ/Հ		Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավ. Գինը	Գումարը	Ընդհանուր արժեքի %
1	2	3	4	5	6	7	8
1		**Արտաքին կոյուղի**				**1243914,525**	**15,33**
1	1-1546	IV կարգի բնահողի մշակում խրամուղիներում մեխանիզմով, կուտակելով խրամուղու կողքը	մ³	29	5000,00	145000,00	
2	1--1588	IV կարգի բնահողի մշակում խրամուղիներում մեխանիզմով, բարձելով ա/ւնքնաթափերի վրա	մ³	9,1	10000,00	91000,00	
3	1--968	Տեղի փափուկ բնահողի հետլիցք ձեռքով	մ³	3,5	10000,00	35000,00	
4	1--1635	Տեղի փափուկ բնահողի հետլիցք բուլդոզերով	մ³	13,9	5000,00	69500,00	
5	310-7	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 7կմ	տ	18,2	3000,00	54600,00	
6	27--42	Խճի շերտի իրականացում 17 սմ հաստ	մ²	0,85	10000,00	8500,00	
7	23-1	Ավազից նախապատրաստական և պաշտպանիչ շերտի իրականացում 10+16+20սմ հաստ	մ³	15	5000,00	75000,00	
8	23-109	Կոյուղու կլոր հորեր հավաքովի ե/բ էլեմենտներից Ø 1000x1250 (h)	մ³	1,80	100000,00	180000,00	
9		Դիտահորի թուջից կափարիչներ D=700մմ	հատ	2,00	50000,00	100000,00	
10	6-83	Մետ. ներդիրների տեղադրում	տ	0,125	100000,00	12500,00	
11	6-1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականասում B-12,5 դասի բետոնից 10սմ հաստ	մ³	0,32	40000,00	12800,00	
12	22-121	Պոլիէթիլենե ծալքավոր խողովակների տեղադրում DN160մմ SN6	գմ	31	14000,00	434000,00	
13	16--221	Համակարգի փորձարկում	գմ	31	840,00	26040,00	
2		**1-ին հարկում սանհանգույցների վերանորոգում**				**4772801,850**	**58,82**
1	46--88	Թեթև բետոնե սալերից միջնորմների քանդումսվաղով և երեսապատման սալիկներով, 100մմ հաստ ներառյալ բացվածքների քանդումը	մ²	48,000	3000,00	144000,00	
2	46--122	Փայտե պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ միասին /վերադարձ/	մ²	6,500	1000,00	6500,00	
3	46--124	Փայտից դռների քանդում /վերադարձ/	մ²	3,800	1000,00	3800,00	

4	46-119	Ցեմենտե հարթեցնող շերտի քանդում	100մ²	0,320	100000,00	32000,00	
5	46--109	Խեցե սալիկներից հատակների քանդում	100մ²	0,32	100000,00	32000,00	
6	r13--5	Կերամիկական սալիկներից երեսապատումների քանդում, հիմնական պատերից	մ²	27,500	2000,00	55000,00	
7	r13--5	Սվաղի քանդում հիմնական պատերից	մ²	30,000	2000,00	60000,00	
8	19--54	Թուջե խողովակների ապամոնտաժում D=100մմ.50մմ	գծմ	19,00	1000,00	19000,00	
9	19--69	Լվացարանակոնքի ապամոնտաժում վերադարձ	հատ	4,00	1000,00	4000,00	
10	19--70	Զուգարանակոնքի ապամոնտաժում/վերադարձ/	հատ	4,00	1000,00	4000,00	
11	C310-7	Շին աղբի բարձում և տեղափոխում 12կմ 7.2*2	տ	14,400	3000,00	43200,00	
12	8--140	Բետոնե բլոկներց դռների բացվածքների լրացում, միջնորմների իրականացում 20*20*40սմ հաստ	մ³	4,180	5000,00	20900,00	
13	8-150	Անցքերի լցափակում թեթև բետոնով B 15դասի	մ³	0,550	40000,00	22000,00	
14		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0,023	1000000,00	23000,00	
15	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում	տ	0,024	1000000,00	24000,00	
16	8-59	Շարվածքի ամրա-նավորում ցանցով ամրան A-Ic	տ	0,012	1000000,00	12000,00	
17		Փրփրապլաստ 20մմ հաստք L-200	մ²	0,250	100000,00	25000,00	
18	Շուկա	Լամինատե դռների տեղադրում սան.հանգույցներում, իր հարմարանքներով	մ²	3,36	40000,00	134400,00	
19	Տեղեկագիր	պատուհաններ Ալյումինե, արտաքին, ջերմախզիչ միջուկով, ապակեպատ: 60մմ երկշերտ փայլատ /մատվի/ ապակեփաթեթով, 4+4մմ բացվող /տեղադրումը և տեղափոխումը ներառված է գնի մեջ /	մ²	2,16	40000,00	86400,00	
20	Տեղեկագիր	պատուհաններ Ալյումինե, արտաքին, ջերմախզիչ միջուկով, 60մմ երկշերտ փայլատ /մատվի/ ապակեփաթեթով,4+4մմ չբացվող /տեղադրումը և տեղափոխումը ներառված է գնի մեջ /	մ²	4,29	30000,00	128700,00	
21	10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում b=400մմ	գմ	3,40	5000,00	17000,00	
22	11-18	Ջրամեկուսացում իզոգամով /ներառյալ պատերի կողքով/	մ²	40,0	3000,00	120000,00	
23	11-55 11-56	Հատակի տակ հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 30մմ հաստությամբ	մ²	31,2	1000,00	31200,00	
24	11-135	Չսահող խեցեսալերով հատակի իրականացում	մ²	31,2	5000,00	156000,00	
25	15--256	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով	մ²	102,0	1000,00	102000,00	
26	15--84	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	մ²	87,5	5000,00	437500,00	
27	34-357	Կախով՞ի պլաստմասե, սպիտակ տիպի առաստաղ/ներառյալ ամրացման դետալները/	մ²	31,2	5000,00	156000,00	
28	15--664	Դռների և պատուհանների շեպերի ներկում լատեքսային ներկով	մ²	4,8	10000,00	48000,00	
29	10,45	Սանհանգույցներում ջրակայուն լամինատե միջնորմների իրականացում (ներառյալ ամրացման	մ²	25,2	5000,00	126000,00	

		դետալները)					
30		Նիկելապատ դեկորատիվ կանգնակ Φ50	գմ	34,4	10000,00	344000,00	
31		Ծխնի	հատ	24,0	2000,00	48000,00	
32		Բռնակ	հատ	8,0	1000,00	8000,00	
33	16-34	Կոյուղու պոլիէտիլենե խողովակներ ռետինե սեղմիչ օղակներով, հողի մեջ d=110մմ	գմ	3,50	100000,00	350000,00	
34	16-34	Կոյուղու պոլիէտիլենե խողովակներ ռետինե սեղմիչ օղակներով, պատի վրա d=110մմ	գմ	25,00	10000,00	250000,00	
35	16-33	Կոյուղու պլաստմասե խողովակներ ռետինե սեղմիչ օղակներով, պաի վրա d=50մմ	գմ	6,00	50000,00	300000,00	
36	22--366	Պոլիէթիլենե ստուգիչ d=110մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
37	22--366	Պոլիէթիլենե մաքրիչ d=110մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
38	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=110մմ	հատ	18,00	3000,00	54000,00	
39	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=50մմ	հատ	16,00	3000,00	48000,00	
40	22--365	Պոլիէթիլենե անցում d=100/50մմ	հատ	2,00	5000,00	10000,00	
41	17-62	Ճենապակյա կերամիկական զուգարանակոնք լվացման տակառիկով և ճկուն միացումով /լավորակ/	կ-տ	6,00	60000,00	360000,00	
42	17-22	Ճենապակյա կերամիկական լվացարան, ճկուն միացումով,պլաստմասե սիֆոնով և պատվանդանով	կ-տ	2,00	30000,00	60000,00	
43	17-36	Հոսակ արծնապատTp-50	հատ	8,00	5000,00	40000,00	
44	16--220	Համակարգի փորձարկում	գմ	35,00	1000,00	35000,00	
45	23--116	Անցքերի բացում կապիտալ պատերում 0,3*0,3*0,5մ	հատ	2,00	5000,00	10000,00	
46	ռ23--134	Անցքերի վերականգնում կապիտալ պատերում 0,3*0,3*0,5մ	մ^3	0,10	1000,00	10000,00	
47	16--72	Անցքերում պաղպատե պատյանի տեղադրում D=200մմ L-0,5մ	գմ	1,00	5000,00	5000,00	
48	15--613	Պողպատե պատյանների ներկում 2 շերտով հակաքայքայիչ ներկով	մ2	0,60	5000,00	3000,00	
49	20--696	Մետաղական կոնստրուկցիաներ խողովակների ամրացման համար	կգ	5,00	5000,00	25000,00	
50		Մետաղական կոնստրուկցիաների ներկում հակակորոզիոն ներկով 2 շերտ	տ	0,005	1000000,00	5000,00	
51		Խցափակում խողովակի և պատյանի միջև առաձկական նյութով	մ^3	0,024	100000,00	2400,00	
52	46--73	Անցքերի խցափակում B-12,5 դասի բետոնով	մ^3	0,060	40000,00	2400,00	
53	46--99	Հատակի քանդում 0,,2*0,2*25մ	մ^3	1,00	31400,00	31400,00	
54	11--11	Հատակի բետոնի շերտի վերականգնում 0,,3*0,3*50մ	մ^3	0,50	40000,00	20000,00	
55	23--226 310-7	Շին աղբի բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տ	2,00	5000,00	10000,00	
56	8--523-1	Լուսատու լուսադիոդային կլոր ներկառուցված կախովի առաստաղի մեջ սանհանգույցների D120/1*8/վտ 520լմ 3500Կ IP44 տեղադրումով	հատ	5	50000,00	250000,00	

57	8--591-7	Խցակի վարդակ երկբևեռ հողանցիչով 10Ա IP20	հատ	5	2000,00	10000,00	
58	8--591-2	Անջատիչ մեկստեղանի IP20	հատ	3	5000,00	15000,00	
59		Տուփ անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	8	1000,00	8000,00	
60		Տուփ ճյուղավորման	հատ	3	1000,00	3000,00	
61	8--148-9	Մալուխ պղնձե ջղերով ՎՎԳ 3*2,5քառ.մմ	գմ	65	1000,00	65000,00	
62		էլեկտրատեխնիկական չայրվող պլասիկ ճկուն խողովակ d-20մմ/գոֆրե/	գմ	40	500,00	20000,00	
63	16--263	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN25 /32*3մմ/,փորձարկումով	գմ	16,00	1000,00	16000,00	
64	16--262	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN20 /25*2,5մմ/,փորձարկումով	գմ	6,00	1000,00	6000,00	
65	16--261	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN15 /20*1,9մմ/,փորձարկումով	գմ	25,00	1000,00	25000,00	
66	16-134	Բրոնզե փական d=25մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
67	16-134	Բրոնզե փական d=20մմ	հատ	3,00	5000,00	15000,00	
68	16-134	Բրոնզե փական d=15մմ /սառը և տաք/	հատ	4,00	5000,00	20000,00	
69	16-134	Գնդիկավոր փական d=15մմ	հատ	11,00	5000,00	55000,00	
70		Ճկուն խողովակ զուգարանակոնքի համար	հատ	7,00	2000,00	14000,00	
71	17--52	Լվացարանի ծորակ	հատ	4,00	10000,00	40000,00	
72		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=25մմ	հատ	3,00	1000,00	3000,00	
73		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=20մմ	հատ	11,00	1000,00	11000,00	
74		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=15մմ	հատ	22,00	500,00	11000,00	
75		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=15մմ /տաք ջրի համար/	հատ	8,00	500,00	4000,00	
76		Պոլիպրոպիլենե խողովակների անցում d=25/20մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
77		Պոլիպրոպիլենե խողովակների անցում d=50/15մմ	հատ	2,00	1000,00	2000,00	
78		Պոլիպրոպիլենե խողովակների անցում d=20/15մմ	հատ	3,00	1000,00	3000,00	
79		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=25*25*20մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
80		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=25*15*20մմ	հատ	3,00	1000,00	3000,00	
81		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=15*15*15մմ սառը և տաք ջրի համար	հատ	10,00	1000,00	10000,00	
82	16-219	Համակարգի փորձարկում	գմ	42,00	1000,00	42000,00	
3		**Մարզպետի աշխատասենյակի սան. հանգույցների վերանորոգում**				**559 883,250**	**6,90**
1	46-119	Ցեմենտե հարթեցնող շերտի քանդում	100մ^2	0,046	100000,00	4600,00	
2	46--109	Խեցե սալիկներից հատակների քանդում	100մ^2	0,045	100000,00	4500,00	
3	r13--5	Կերամիկական սալիկներից երեսապատումների քանդում	մ^2	19,200	1000,00	19200,00	
4	C310-7	Շին աղբի բարձում և տեղափոխում 12կմ 0.95*1,8	տ	1,900	3000,00	5700,00	

5	11--18	Ջրամեկուսացում իզոգամով /ներառյալ պատերի կողքով/	մ²	6,5	2000,00	13000,00	
6	11--55- - 11--56	Հատակի տակ հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 30մմ հաստությամբ	մ²	4,6	5000,00	23000,00	
7	11--135	Չսահող խեցեսալերով հատակի իրականացում	մ²	4,6	10000,00	46000,00	
8	15--256	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով	մ²	20,5	3000,00	61500,00	
9	15--84	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	մ²	19,2	5000,00	96000,00	
10	34-357	Կախով՞ի պլաստմասե, սպիտակ տիպի առաստաղ/ներառյալ ամրացման դետալները/	մ²	4,6	10000,00	46000,00	
11	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=110մմ	հատ	1,00	6 883,25	6 883,25	
12	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=50մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
13	17-62	Ճենապակյա կերամիկական զուգարանակոնք լվացման տակառիկով և ճկուն միացումով /լավորակ/	կ-տ	1,00	30000,00	30000,00	
14	17-22	Ճենապակյա կերամիկական լվացարան, ճկուն միացումով,պլաստմասե սիֆոնով և պատվանդանով	կ-տ	1,00	20000,00	20000,00	
15	17-36	Հոսակ արծնապատTp-50	հատ	1,00	5000,00	5000,00	
16	16--220	Համակարգի փորձարկում	գմ	35,00	1000,00	35000,00	
17	19--69	Լվացարանակոնքի ապամոնտաժում վերադարձ	հատ	1,00	1000,00	1000,00	
18	19--70	Զուգարանակոնքի ապամոնտաժում/վերադարձ/	հատ	1,00	1000,00	1000,00	
19	8--523-1	Լուսատու լուսադիոդային կլոր ներկառուցված կախովի առաստաղի մեջ սանհանգույցների D120/1*8/վտ 520լմ 3500Կ IP44 տեղադրումով	հատ	1	10000,00	10000,00	
20	8--591-7	Խցակի վարդակ երկբևեռ հողանցիչով 10Ա IP20	հատ	2	5000,00	10000,00	
21	8--591-2	Անջատիչ մեկստեղանի IP20	հատ	1	5000,00	5000,00	
22		Տուփ անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	3	5000,00	15000,00	
23		Տուփ ճյուղավորման	հատ	1	1000,00	1000,00	
24	8--148-9	Մալուխ պղնձե ջղերով ՎՎԳ 3*2,5քառ.մմ	գմ	8	1000,00	8000,00	
25		էլեկտրատեխնիկական չայրվող պլաստիկ ճկուն խողովակ d-20մմ /գոֆրե/	գմ	5	500,00	2500,00	
26	16--262	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN20 /25*2,5մմ/,փորձարկումով	գմ	2,00	10000,00	20000,00	
27	16--261	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN15 /20*1,9մմ/,փորձարկումով	գմ	5,00	2000,00	10000,00	
28	16-134	Բրոնզե փական d=20մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
29	16-134	Բրոնզե փական d=15մմ /սառը և տաք/	հատ	2,00	5000,00	10000,00	
30	16-134	Գնդիկավոր փական d=15մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
31		Ճկուն խողովակ զուգարանակոնքի համար	հատ	1,00	5000,00	5000,00	
32		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=20մմ	հատ	2,00	5000,00	10000,00	

33		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=15մմ	հատ	5,00	2000,00	10000,00	
34		Պոլիպրոպիլենե խողովակների անցում d=20/15մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
35		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=25*15*20մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
36		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=15*15*15մմ սառը և տաք ջրի համար	հատ	1,00	1000,00	1000,00	
37	16-219	Համակարգի փորձարկում	գմ	7,00	1000,00	7000,00	
4		**Փոխմարզպետի աշխատասենյակի սանհանգույցների վերանորոգում**				**428 432,40**	**5,28**
1	46-119	Ցեմենտե հարթեցնող շերտի քանդում	$100մ^2$	0,028	100000,00	2800,00	
2	46--109	Խեցե սալիկներից հատակների քանդում	$100մ^2$	0,028	100000,00	2800,00	
3	r13--5	Կերամիկական սալիկներից երեսապատումների քանդում	$մ^2$	13,700	1000,00	13700,00	
4	C310-7	Շին աղբի տեղափոխում 12կմ 274*1,8	տ	1,250	3000,00	3750,00	
5	11--18	Ջրամեկուսացում իզոգամով /ներառյալ պատերի կողքով/	$մ^2$	4,5	2000,00	9000,00	
6	11--55- - 11--56	Հատակի տակ հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 30մմ հաստությամբ	$մ^2$	2,8	5000,00	14000,00	
7	11--135	Չսահող խեցեսալերով հատակի իրականացում	$մ^2$	2,8	10000,00	28000,00	
8	15--256	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով	$մ^2$	15,0	3000,00	45000,00	
9	15--84	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	$մ^2$	13,61	5000,00	68050,00	
10	34-357	Կախով՞ի պլաստմասե, սպիտակ տիպի առաստաղ/ներառյալ ամրացման դետալները/	$մ^2$	2,8	10000,00	28000,00	
11	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=110մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
12	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=50մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
13	17-62	Ճենապակյա կերամիկական զուգարանակոնք լվացման տակառիկով և ճկուն միացումով /լավորակ/	կ-տ	1,00	50000,00	50000,00	
14	17-22	Ճենապակյա կերամիկական լվացարան, ճկուն միացումով,պլաստմասե սիֆոնով և պատվանդանով	կ-տ	1,00	30000,00	30000,00	
15	17-36	Հոսակ արծնապատTp-50	հատ	1,00	5000,00	5000,00	
16	16--220	Համակարգի փորձարկում	գմ	3,00	1000,00	3000,00	
17	19--69	Լվացարանակոնքի ապամոնտաժում վերադարձ	հատ	1,00	1000,00	1000,00	
18	19--70	Զուգարանակոնքի ապամոնտաժում/վերադարձ/	հատ	1,00	1000,00	1000,00	
19	8--523-1	Լուսատու լուսադիոդային կլոր ներկառուցված կախովի առաստաղի մեջ սանհանգույցների D120/1*8/վտ 520լմ 3500Կ IP44 տեղադրումով	հատ	1	20000,00	20000,00	
20	8--591-7	Խցակի վարդակ երկբևեռ հողանցիչով 10Ա IP20	հատ	2	5000,00	10000,00	
21	8--591-2	Անջատիչ մեկստեղանի IP20	հատ	1	5000,00	5000,00	
22		Տուփ անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	3	1000,00	3000,00	
23		Տուփ ճյուղավորման	հատ	1	1000,00	1000,00	

24	8--148-9	Մալուխ պղնձե ջղերով ՎՎԳ 3*2,5քառ.մմ	գմ	8	1000,00	8000,00	
25		էլեկտրատեխնիկական չայրվող պլաստիկ ճկուն խողովակ d-20մմ/գոֆրե/	գմ	5	500,00	2500,00	
26	16--262	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN20 /25*2,5մմ/,փորձարկումով	գմ	1,00	5000,00	5000,00	
27	16--261	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN15 /20*1,9մմ/,փորձարկումով	գմ	3,00	1000,00	3000,00	
28	16-134	Բրոնզե փական d=20մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
29	16-134	Բրոնզե փական d=15մմ /սառը և տաք/	հատ	2,00	5000,00	10000,00	
30	16-134	Գնդիկավոր փական d=15մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
31		Ճկուն խողովակ զուգարանակոնքի համար	հատ	1,00	5000,00	5000,00	
32		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=20մմ	հատ	2,00	5000,00	10000,00	
33		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=15մմ	հատ	3,00	2000,00	6000,00	
34		Պոլիպրոպիլենե խողովակների անցում d=20/15մմ	հատ	1,00	8832,40	8832,40	
35		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=25*15*20մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
36		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=15*15*15մմ սառը և տաք ջրի համար	հատ	1,00	1000,00	1000,00	
37	16-219	Համակարգի փորձարկում	գմ	4,00	1000,00	4000,00	
5		**Աշխատակազմի ղեկավարի աշխատասենյակի սանհանգույցների վերանորոգում**				**514 443,45**	**6,34**
1	r13--5	Սվաղի քանդում պատերից h=3մ	մ^2	18,0	1000,00	18000,00	
2	C310-7	Շին աղբի տեղափոխում 12կմ 274*1,8	տ	1,300	30000,00	39000,00	
3	11--18	Ջրամեկուսացում իզոգամով /ներառյալ պատերի կողքով/	մ^2	4,0	2000,00	8000,00	
4	11--55- - 11--56	Հատակի տակ հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 60մմ հաստությամբ	մ^2	2,6	5000,00	13000,00	
5	11--135	Չսահող խեցեսալերով հատակի իրականացում	մ^2	2,6	10000,00	26000,00	
6	15--256	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով	մ^2	18,0	3000,00	54000,00	
7	15--84	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով H=2.7մ	մ^2	16,0	5000,00	80000,00	
8	34-357	Կախով՞ի պլաստմասե, սպիտակ տիպի առաստաղ/ներառյալ ամրացման դետալները/	մ^2	2,6	10000,00	26000,00	
9	20-106	Օդատար ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ d=150մմ 3.5գծ.մ	մ^2	4,200	5000,00	21000,00	
10	20--407	Օդափոխության կարգավորող ճաղաշար 150*150մմ	հատ	1,000	5000,00	5000,00	
11	16-34	Կոյուղու պոլիէտիլենե խողովակներ ռետինե սեղմիչ օղակներով, պատի վրա d=110մմ, կանգնակի օդահան	գմ	5,00	10000,00	50000,00	
12	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=110մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
13	22--366	Պոլիէթիլենե ձևավոր մասեր d=50մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
14	17-62	Ճենապակյա կերամիկական զուգարանակոնք լվացման տակառիկով և ճկուն միացումով	կ-տ	1,00	50000,00	50000,00	

		/լավորակ/					
15	17-22	ճենապակյա կերամիկական լվացարան, ճկուն միացումով,պլաստմասե սիֆոնով և պատվանդանով	կ-տ	1,00	30000,00	30000,00	
16	17-36	Հոսակ արծնապատTp-50	հատ	1,00	5000,00	5000,00	
17	16--220	Համակարգի փորձարկում	գմ	3,00	1000,00	3000,00	
18	19--69	Լվացարանակոնքի ապամոնտաժում վերադարձ	հատ	1,00	1000,00	1000,00	
19	19--70	Զուգարանակոնքի ապամոնտաժում/վերադարձ/	հատ	1,00	1000,00	1000,00	
20	8--523-1	Լուսատու լուսադիոդային կլոր ներկառուցված կախովի առաստաղի մեջ սանհանգույցների D120/1*8/վտ 520լմ 3500Կ IP44 տեղադրումով	հատ	1	10000,00	10000,00	
21	8--591-7	Խցակի վարդակ երկբևեռ հողանցիչով 10Ա IP20	հատ	2	5000,00	10000,00	
22	8--591-2	Անջատիչ մեկստեղանի IP20	հատ	1	5000,00	5000,00	
23		Տուփ անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	3	1000,00	3000,00	
24		Տուփ ճյուղավորման	հատ	1	1000,00	1000,00	
25	8--148-9	Մալուխ պղնձե ջղերով ՎՎԳ 3*2,5քառ.մմ	գմ	8	1000,00	8000,00	
26		էլեկտրատեխնիկական չայրվող պլաստիկ ճկուն խողովակ d-20մմ/գոֆրե/	գմ	5	500,00	2500,00	
27	16--262	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN20 /25*2,5մմ/,փորձարկումով	գմ	1,00	1000,00	1000,00	
28	16--261	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN15 /20*1,9մմ/,փորձարկումով	գմ	3,00	1000,00	3000,00	
29	16-134	Բրոնզե փական d=20մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
30	16-134	Բրոնզե փական d=15մմ /սառը և տաք/	հատ	2,00	5000,00	10000,00	
31	16-134	Գնդիկավոր փական d=15մմ	հատ	1,00	5000,00	5000,00	
32		Ճկուն խողովակ զուգարանակոնքի համար	հատ	1,00	5000,00	5000,00	
33		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=20մմ	հատ	2,00	1000,00	2000,00	
34		Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ d=15մմ	հատ	3,00	1000,00	3000,00	
35		Պոլիպրոպիլենե խողովակների անցում d=20/15մմ	հատ	1,00	2943,45	2943,45	
36		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=25*15*20մմ	հատ	1,00	1000,00	1000,00	
37		Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ d=15*15*15մմ սառը և տաք ջրի համար	հատ	1,00	1000,00	1000,00	
38	16-219	Համակարգի փորձարկում	գմ	4,00	1000,00	4000,00	
6		**1-ին հարկի սան հանգույցի օդափոխության համակարգ**				**594 774,525**	**7,33**
1	20--704 կիրառ	Կանալային օդամուղ L-300մ3//ժամ	կ-տ	2,000	10000,00	20000,00	
2		Օդամուղի արժեքը L-300մ3//ժամ	կ-տ	2,000	50000,00	100000,00	
3	20--107	Օդատար ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ d=200մմ 60գծ.	մ^2	37,680	5000,00	188400,00	
4	20-106	Օդատար ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ d=150մմ 15գծ.մ	մ^2	7,070	5000,00	35350,00	

5	20--407	Օդափոխության կարգավորող ճաղաշար 150*150մմ	հատ	9,000	10000,00	90000,00	
6	20--408	Օդափոխության ճաղաշար 200*200մմ	հատ	1,000	5424,525	5424,525	
7	34--317 34--328	Օդատարների երեսապատում գիպսաստվարաթղթով մետաղական կարկասի վրա	մ^2	20,000	5000,00	100000,00	
8	46--53	Անցքերի բացում պատերում d-200մմ	հատ	3,000	1000,00	3000,00	
9	46--53	Անցքերի բացում միջհարկային ծածկերում d-200մմ	հատ	3,000	1000,00	3000,00	
10	46--53	Անցքերի բացում միջհարկային ծածկերում d-150մմ	հատ	4,000	1000,00	4000,00	
11	20--524	Գլխանոց ցինկապատ թիթեղից d-200մմ օդատարի վրա , հատ 3 0,09մ2	մ^2	0,270	100000,00	27000,00	
12	20--524	Գլխանոց ցինկապատ թիթեղից d-150մմ օդատարի վրա 00,,062մ3 3հատ	մ^2	0,186	100000,00	18600,00	
		Ընդամենը				**8 114 250,00**	**100,00**
		ԱԱՀ 20%				**1 622 850,00**	
		Ընդամենը ԱԱՀ-ով				**9 737 100,00**	

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 1510032335590400
Արարատբանկ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՈԼԱՐ ՑԵՆՏՐ» ՍՊԸ

Հասցե՝
ՀՀ Արմավիրի մարզ,
ք. Էջմիածին Ե.Չարենցի 1/1
Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ՝ 220213331410000
ՀՎՀՀ՝ 04431014
Գլխավոր տնօրեն՝ Ալիկ Ֆահրադյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
« 31 » օգոստոսի 2022թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետարանի վարչական շենքի սան հանգույցների վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	60 օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	60 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 1510032335590400
Արարատբանկ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՈԼԱՐ ՑԵՆՏՐ» ՍՊԸ

Հասցե՝
ՀՀ Արմավիրի մարզ,
ք. Էջմիածին Ե.Չարենցի 1/1
Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ՝ 220213331410000
ՀՎՀՀ՝ 04431014
Գլխավոր տնօրեն՝ Ալիկ Ֆահրադյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
« 31 » օգոստոսի 2022թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**45461100**	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	9,737,100	9,737,100	9,737,100	9,737,100	9,737,100	9,737,100

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 1510032335590400
Արարատբանկ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՈԼԱՐ ՑԵՆՏՐ» ՍՊԸ

Հասցե՝
ՀՀ Արմավիրի մարզ,
ք. Էջմիածին Ե.Չարենցի 1/1
Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ՝ 220213331410000
ՀՎՀՀ՝ 04431014
Գլխավոր տնօրեն Ալիկ Ֆահրադյան

/ստորագրություն/

Կ.Տ